

**ՏՆԱՅԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IN-HOME SUPPORTIVE SERVICES, IHSS) ԾՐԱԳԻՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ ՄՏԱՑՈՂԻՆ՝ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇԱԲԱԹՎԱ ՄԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻՑ ԱԶԱՏՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

(ADDRESSEE)

ՎԱՐՉԱՇՐՋԱՆ՝ \_\_\_\_\_

Ծանուցման ամսաթիվը՝ \_\_\_\_\_  
IHSS գրասենյակի հասցեն՝ \_\_\_\_\_

IHSS գրասենյակի հեռախոսահամարը՝ \_\_\_\_\_

Ստացողի անունը՝ \_\_\_\_\_  
Գործի համարը՝ \_\_\_\_\_

Մատակարարողի անունը՝ \_\_\_\_\_  
Մատակարարողի համարը՝ \_\_\_\_\_

Ում՝ Տնային աջակցության ծառայությունների (IHSS) ստացողին

Այս ծանուցումը տեղեկացնում է ձեզ, որ \_\_\_\_\_, սպասարկման  
Ամիսը և տարին

ամսվա վերջում արտակարգ հանգամանքների համար աշխատանքային շաբաթվա սահմանափակումներից ազատումը (Ազատում 2) դադարեցվելու է ձեր վերոնշյալ IHSS մատակարարողի համար, քանի որ

- Ձեր մատակարարողն այլևս ծառայություններ չի տրամադրում մեկ կամ ավել ստացողներին, ում համար ազատում էր շնորհվել:
- Ձեր մատակարարողն այլևս չի բնակվում մեկ կամ ավել ստացողների հետ, ում համար ազատում էր շնորհվել:
- Մեկ կամ ավել ստացողներին, ում համար ազատում էր շնորհվել, IHSS հաստատված ժամերը կրճատվել են, ինչը թույլ է տալիս մատակարարողին աշխատել աշխատանքային շաբաթվա սահմաններում:
- Մեկ կամ ավել ստացողները, ում համար ազատում էր շնորհվել, այլևս չի/չեն որակավորվում Ազատում 2-ի չափանիշների համար:
- Ստացող(ներ)ն աշխատանքի է ընդունել լրացուցիչ մատակարարող(ներ), և, հետևաբար, ձեր մատակարարողը կարող է ենթարկվել աշխատանքային շաբաթվա սահմանափակումներին:
- ԱՅԼ՝ \_\_\_\_\_

Այս դադարեցումը նշանակում է, որ ձեր մատակարարողը պետք է ենթարկվի գոյություն ունեցող աշխատանքային շաբաթվա սահմանափակումներին: Հետևաբար, առավելագույն ժամերի քանակը, որը ձեր մատակարարողը կարող է աշխատել մեկ աշխատանքային շաբաթում երկու (2) կամ ավել ստացողների համար, միասնաբար կազմում է 66 ժամ: Եթե ձեր մատակարարողը ժամանակացույց է ներկայացնում՝ զեկուցելով 66 ժամ սահմանափակումը գերազանցող աշխատանքային ժամեր այս դադարեցման ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո, ապա ձեր մատակարարողը խախտում կատանա:

Կա՛մ դուք, կա՛մ այլ ստացողներից որևէ մեկը, ում համար աշխատում է մատակարարողը, պետք է աշխատանքի ընդունեք մեկ այլ IHSS մատակարարող(ներ), որպեսզի նա աշխատի մնացած հաստատված IHSS ժամերը, որոնք գերազանցում են աշխատանքային շաբաթվա 66 ժամ սահմանափակումը: Խնդրում ենք քննարկել սա ձեր մատակարարողի հետ և համապատասխան պատրաստություններ տեսնել՝ համոզվելու համար, որ աշխատանքային շաբաթվա սահմանափակումները չեն գերազանցվում:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք դիմել ձեր IHSS վարչաշրջանի սոցիալական աշխատողին IHSS գրասենյակում՝ վերոնշյալ հեռախոսահամարով: